

եւ բոլորն ուշ պիտի դնեն ընթերցման « անմոռնչ ճաշակմամբ » . եւ եթէ մէկը տարակոյս մ' ունենայ ընթերցուածի մասին, կրնայ կարողներու հարցնել, « եւ դարձեալ ճաշակեսցեն լոբլեայն եւ ոչ ադաղակաւ » : Պատուէրս ընդունուեր է եւ կայ ցարդ քանի մ' ազգային վանքերու մէջ : Ի զուր խուզարկեցի հրահանգս Ս. Ղազարու ժԳ-ժԷ դարուց գրչագրաց մէջ<sup>1</sup>. ոչ մին չունի զայդ : Եւ առաջին անգամ գտայ 1662ին յԱմստերդամ տպուած ժամագրին մէջ, ուսկից ասպա առեր են ուրիշ տպագիրք ալ<sup>2</sup> :

Ինչպէս մտաւ ուրեմն այդ հրահանգը : Արեւմտեան բարքերը ճանաչողացս յայտնի է անոնց բոլոր վանքերու եւղալրանոցաց մէջ մինչեւ ցարդ տեւող կանոնը՝ լոռութեամբ եւ ընթերցմամբ ճաշելու : Անտարակոյս անոցմէ առած են զայդ մեր առաջին տպագրիչք ալ, կամ այդ ժամանակ արդէն մտած էր սովորոյթը մեր մէջ : Եւ զոր շատ համոզիչ կը գտնենք, երբ նկատենք ամստերդամեան տպագրին վըրայ լատինական ազգեցութիւնը, որ ա-

1. Օրինակք 1284, 1408, '65, 1556, '81, '98, '99, 1641, '55, '63, '73 տարիներու :

2. Ամստերդամի՝ 1686ին եւ 1688ին, Կ. Պոլսոյ՝ 1701ին եւ այլն :